ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը		*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Արձանագրություն	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀԱԳՆՊՏ 2017.07.26/1(38)	*Ընդունման վայրը*	Աշգաբադ
Ընդունող մարմինը	Հայաստանի Հանրապետություն	*Ընդունման ամսաթիվը*	30.05.2012
Ստորագրող մարմինը		*Ստորագրման ամսաթիվը*	30.05.2012
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	21.04.2017	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ 1999Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ 1999Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՊՀ մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի ստեղծման մասին 1999թ. հունվարի 13-ի Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) մասնակից պետությունների կառավարությունները, հետագայում՝ Կողմեր,

Համաձայնագրի դրույթների ճշգրտման նպատակով համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. 4-րդ հոդվածի 1-ին կետում «Գիտական-տեխնոլոգիական զարգացման միջպետական կոմիտե (հետագայում՝ ԳՏԶ ՄԿ)» բառերը փոխարինել «Գիտական-տեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության միջպետական խորհուրդ (հետագայում՝ ԳՏՆ ՄԽ)» բառերով և «Տնտեսագիտական խորհրդի միջպետական տնտեսագիտական կոմիտե (հետագայում՝ ՄՏԿ)» բառերը՝ «ԱՊՀ տնտեսագիտական խորհուրդ» բառերով:
2. 4-րդ հոդվածի 2-րդ կետում ՄՏԿ հապավումը փոխարինել «ԱՊՀ տնտեսագիտական խորհուրդ» բառերով:
3. 4-րդ հոդվածի 3-րդ կետում ԳՏԶ ՄԿ հապավումը փոխարինել ԳՏՆ ՄԽ հապավումով:
4. 9-րդ հոդվածում բացառել «և ուժի մեջ են մտնում Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգին համապատասխան» բառերը:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո:

Կատարված է Աշգաբադ քաղաքում 2012թ. մայիսի 30-ին, մեկ բնօրինակով, ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն Արձանագրությունն ստորագրած յուրաքանչյուր պետության կուղարկի նրա հաստատված պատճենը:

Ադրբեջանի Հանրապետության
Կառավարության կողմից՝
վերապահումով
/ստորագրություն/

Ռուսաստանի Դաշնության
Կառավարության կողմից՝
/ստորագրություն/

Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝
հայտարարությամբ
/ստորագրություն/

Տաջիկստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝
/ստորագրություն/

Բելառուսի Հանրապետության
Կառավարության կողմից՝
/ստորագրություն/

Թուրքմենստանի
Կառավարության կողմից՝

Ղազախստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝
/ստորագրություն/

Ուզբեկստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝

Ղրղզստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝
/ստորագրություն/

Ուկրաինայի
Կառավարության կողմից՝
/ստորագրություն/

Մոլդովայի Հանրապետության
Կառավարության կողմից՝
/ստորագրություն/

Ադրբեջանի Հանրապետության
վերապահումը

ԱՊՀ մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի ստեղծման մասին 1999թ. հունվարի 13-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության վերաբերյալ

Ադրբեջանի Հանրապետությունը Գիտական-տեխնիկական և նորարարության ոլորտներում համագործակցության Միջպետական խորհրդի մասնակից չէ:

Ադրբեջանի Հանրապետության
վարչապետի առաջին տեղակալ՝ **Յա. Էյուբով**

Հայաստանի Հանրապետության
հայտարարությունը

ԱՊՀ մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի ստեղծման մասին 1999թ. հունվարի 13-ի Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին արձանագրության նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը ելնում է այն ըմբռնումից, որ արդյունքում ԱՊՀ մասնակից պետությունների միջգրադարանային բաժանորդագրության համակարգի ստեղծման մասին 1999թ. հունվարի 13-ի Համաձայնագրին կից՝ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Արձանագրությունները Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ կմտնեն միայն նրանց ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ նախատեսված ներպետական ընթացակարգերի կատարումից հետո:

Հայաստանի Հանրապետության
Վարչապետ՝ **Տ. Սարգսյան**

Արձանագարությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլի 21-ին